

Ջրամեկուսիչ նյութեր BTM

BITUMER BTR 200-ը ջրային հիմքի վրա միատարր ջրամեկուսիչ նյութ է:



Կիրառման ոլորտը

- Շենքերի հիմքերի և նկուղային արտաքին պատերի անխոնավաթափանցելիություն ապահովելու համար,
- որպես ջրամեկուսիչ նյութ՝ տեռասաների, տանքիների, բաղնիքների, խոհանոցային և նման այլ տարածքների չոր կամ թեթև խոնավ մակերևույթները պատելու համար,
- որպես նախաներկ՝ բիտումային ծածկերի տակ,
- որպես կապակցանյութ և նախաներկի համար նյութ՝ ապակեթելքի (стекловолокну), քաթանի (холст) և ամրանավորման այլ նման մեթոդների կիրառման համար,
- պողպատյա կոնստրուկցիաների, խողովակների և նման այլ մետաղական մակերևույթների պատշպանության համար,
- որպես հավելանյութ շաղախներում և ցեմենտավազային սվաղներում անթափանցելիության և հարակցման (ադիեզիա) բարձրացման համար,
- որպես շինարարական կաղապարամածի (опалубка) քսուք՝ ջրի ազդեցությունից որակի վատթարացումը կանխելու և պատրաստի կոնստրուկցիաներից կաղապարամածի (опалубка) հեշտ անջատման նպատակով:

Տեխնիկական բնութագրեր

- Բազա՝ բիտումային էմուլսիա
- Գույն՝ մուգ դարչնագույն
- Խտություն՝ միջինում 1կգ/լ
- Բոցավառման ջերմաստիճան՝ բռնկում տեղի չի ունենում
- Աշխատանքային ջերմաստիճան՝ +5°C/ +35°C
- Քիմիական դիմացկունություն՝ կայուն է նոսրացված թթուների, հիմքերի (щелочь), քլորիդի և սուլֆատ-իոնների հանդեպ:

Առավելությունները

- Չի պարունակում լուծիչներ, հանդիսանում է էկոլոգիապես մաքուր ապրանք և կարող է հանգիստ օգտագործվել փակ տարածքներում,
- կարելի է կիրառել չոր և խոնավ մակերևույթների վրա,
- չորանալուց հետո մակերևույթի վրա գոյացնում է մշտական անջրաթափանց և անխոնավաթափանց շերտ,
- կիրառվում է որպես հավելանյութ ցեմենտային հիմքի վրա շաղախներում՝ անթափանցելիության և հարակցման (ադիեզիա) բարձրացման համար,
- կիրառվում է որպես նախաներկ (грунтовка) բիտումային ծածկերի տակ՝ ջրով բացելով:

Մակերևույթի նախապատրաստումը

Նյութով պատվող մակերևույթը պետք է մաքուր փոշուց, կեղտից, ժանգից, յուղերից և այլ կողմնակի մասնիկներից: Սուր ծայրերն ու անկյուններն անհրաժեշտ է կլորացնել: Որպես նախաներկ (грунтовка) օգտագործելու համար Bitumer BTR200-ը ջրով բացվում է 1:1 հարաբերակցությամբ:

Կիրառման եղանակը

Մեկուսացման իրականացման համար նախաներկով պատելուց առաջ պետք է ստուգել մակերևույթի հարթությունը, չորությունը և մաքրությունը, բացի դրանից՝ ստուգվում է թեքության առաջացման համար իրականացվող սվաղի շերտը: BTR 200-ը մակերևույթի վրա պատվում է խոզանակի կամ հեղուկացիրի (путьверизатор) օգնությամբ՝ 1քառ.մ վրա 400գ չափով, այնուհետև անհրաժեշտ է սպասել մինչև լրիվ չորանալը: Եղանակային պայմաններից կախված չորանալու ժամանակը տևում է 4-5ժամ: Եթե նյութը պատվում է 2 շերտով, ապա 2-րդ շերտն անհրաժեշտ է պատել միայն 1-ին շերտի ամբողջովին չորանալուց հետո: Մեմբրանի տեղադրման աշխատանքները սկսում են միայն նախաներկի ամբողջովին չորանալուց հետո:

BTM, BTR200-ի ծախսը

- Կախված մակերևույթի հարթությունից՝ միջինում 400գ/մ²
- որպես նախաներկ օգտագործելիս, կախված մակերևույթի հարթությունից՝ միջինում 800գ/մ²:

Փաթեթավորումը

Bitumer BTR200-ը թողարկվում է պլաստիկ տարաներով 17կգ (նետտո) քաշով: TS 113 –ի պահանջներին համապատասխան ապրանքի բնութագրությունն ու անհրաժեշտ տեղեկատվությունը բերված է պիտակի տեքստում:

Պահպանման պայմաններն ու ժամկետները

Bitumer BTR200-ը պետք է պահել զով փակ տարածքներում և պահեստավորել ուղղաձիգ դիրքով: Չենթարկել արևի ուղիղ ճառագայթների ազդեցությանը:

Նախազգուշացումներ և հանձնարարականներ

- չի թույլատրվում պահել սառը վայրերում՝ ցրտահարությունից խուսափելու համար,

- խուսափել աչքերի մեջ և մաշկի վրա ընկնելուց,
- լվանալ գործիքները մաքուր ջրով՝ անմիջապես նյութն օգտագործելուց հետո: